# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 368 - Ա                                                  27 հունիսի 2016 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22 - Ի N 197 – Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքային զարգացման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 197 -Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքային զարգացման հանձնաժողովի կազմը.

| | |
|---|---|
| Գրիգորյան Ռաֆիկ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ |
| Հակոբյան Անդրանիկ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ |
| Հակոբյան Կարեն | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ |
| Նիկոյան Արտաշես | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ |
| Խլղաթյան Սևակ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար |
| Համբարձումյան Համբարձում | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Պողոսյան Անուշ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Հովհաննիսյան Դերենիկ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ |
| Գասպարյան Ավետիք | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ |
| Բադալյան Գարիկ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Մնացականյան Վարդուհի | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ |

Սարտորոսյան Գուրգեն - Գավառի քաղաքապետ /համաձայնությամբ/
Հարությունյան Բագրատ - Մարտունու քաղաքապետ /համաձայնությամբ/
Խլոյան Վոլոդյա - Վարդենիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
Ղուկասյան Ռուդիկ - Սևանի քաղաքապետ /համաձայնությամբ/
Ավալյան Յուրա - Ճամբարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
Բադալյան Հակոբ - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալության պետ /համաձայնությամբ/
Հայրապետյան Դավիթ - «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության Գավառի մասնաճյուղի կառավարիչ /համաձայնությամբ/
Մելքոնյան Սաշա - «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն /համաձայնությամբ/
Գրիգորյան Արտյոմ - ՀՀ Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն /համաձայնությամբ/
Սարգսյան Արսեն - «ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» Գեղարքունիքի մարզային մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/
Պետրոսյան Արայիկ - ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի ավագ տեսուչ /համաձայնությամբ/
Շահզադյան Անահիտ - «Գավառի բիզնես կենտրոն» ՀԿ-ի նախագահ /համաձայնությամբ/
Գևորգյան Անահիտ - «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ նախագահ/համաձայնությամբ/
Բադեյան Սաթիկ - «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ /համաձայնությամբ/
Դաբաղյան Վահագն - «Աժդահակ լրագրողների ասոցիացիա» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/».

2) որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Հանձնաժողովին՝ քննարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2020 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագիծը և հավանություն տալուց հետո ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ